Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գանձակ գյուղի **N 2** միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի՝ «ֆիզկուլտուրա» առարկայի (22 դասաժամ), «Կերպարվեստ» (2 դասաժամ), «Տեխնոլոգիա» առարկայի տղաների և աղջիկների խումբ (4 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է(Ձև **1**),
2. Փաստաթուղթ(դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի **26**-րդ հոդվածի **1**-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն(Ձև **4**),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ **3x4** չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են **2022** թ.-ի հունիսի **22**-ից մինչև **2022**թ-ի հուլիսի **6**-ը ներառյալ, ամեն օր ժամը **10:00**-ից **15:00**-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2022թ.-ի հուլիսի **8** -ին ժամը **14**^{00}-ին, ՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գանձակ գյուղի **N 2** միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում , հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ գյուղ Գանձակ Հ. Ավետիսյան **1**:

Տեղեկությունների համար զանգահարել՝ **(096)526231** հեռախոսահամարով: